ԿԱՐՍ - ԱՆԽԱՎԱԿԱՆ - ՊԱՔՈՒ ԵՐԿԱՐՈՒՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՋԱԲԱԽԻ ՀԱՅՅԵՐԸ ԴԵՄ ԵՆ

Ջաբախբի հայ բնակչութիւնը դէմ է կարս - Ախալքալաք - Պաքու երկաթուղիի կառուցման ծրագիրներուն: Այդ նախագիծի իրականացման դէմ ուղղուած շարժումը գլխաւորած է «Զանգ» Կուսակցութիւնը: Կուսակցութեան ղեկավարութիւնը յայտնած է, որ կարս - Ախալքալաք - Պաքու երկաթուղիի կառուցման նախագիծի իրականացման պարագային, ընդամենը հինգ - վեց տարուան ընթացքին պիտի փոխուի Ջաբախբի եւ մերձակայ շրջաններու բնակչութեան ազգային կազմը, եւ սպառնալիքի տակ պիտի յայտնուին ջաւախքահայութեան լեզուն, կրօնը եւ մշակոյթը:

Կուսակցութեան ղեկավարութիւնը կը գտնէ, որ շատ աւելի նպատակաւոր մար կ'ըլլար վերականգնել հարողակցութիւնը կարս - Գիւմրի - Թիֆլիս ուղղութեամբ, որ աւելի չափաւէտ է եւ աշխարհազարակա, եւ տնտեսական առումներով:

ԵԱՀԿԻ ՆԱԽԱԳԱՀԸ՝ ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

ԵԱՀԿի գործող նախագահ Ժամազ Կամազը Ժնև քաղաքում իր անձնական կազմակերպչական աշխատանքները կ'աւելիցնէ:

ԶՐԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԵՏԱԶՕՏԱԿԱՆ ԿԵԴՐՈՆ

Միացեալ Նահանգներու գիւղատնտեսութեան նախարարութեան մարքեթինկի աշխատանքները ծրագրուած է արտադրութեան հարցերով զբաղուող միջոցառումներով իրականացնել:

Ըստ ակադեմիայի հողաչինարարութեան ամպիոնի վարիչ Գուրգէն Եղիազարեանի, այս կեդրոնը անցեալ տարի ուսումնասիրութիւններու եւ գիւղատնտեսութեան հիմնադրամի օժանդակութեամբ իրականացուած ուսումնական ջանքերը ծրագրուած է արդիւնք է:

Գ. Եղիազարեանի համաձայն, կեդրոնին գործունէութեան հիմնական ուղղութիւնները պիտի ըլլան աղբիւրներու օգտագործման արդիւնաւէտ եղանակներու եւ նոր արհեստագիտութեան ներդրումը, հողերու բարելաւումը, գիւղատնտեսութեան մէջ ուսուցողական ծրագիրներու իրականացումը: Այս բոլորը պիտի օգնեն աւելցնել վերամշակող հաստատութիւններու ծախսող միջոցներու քանակն ու որակը:

ՐԱՖՖԻ «ԽԱՉԱԳՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ» ԳԻՐՔԻ ՊԱՐԶԵՑՈՒՄԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու «Հայ Գիր» աշակերտական մատենաշարը իր երկրորդ թիւով լոյս ընծայած է Րաֆֆիի «Խաչագողի Յիշատակարանը» գիրքը: Վէպը արեւմտահայերէն վերածած, պարզացուցած եւ պատշգոցուցած է Մարգարիտ Մանուկեանի:

Պատմական վէպերը նոր սերունդին մատչելի դարձնելու առաջադրանքով հրատարակուած այս հատորը կը բաղկանայ 108 էջերէ: Գեղարուեստական ձեւաւորումը եւ կողքի նկարը կը պատկանին Յովիկ Մանուկեանին:

Գիրքին վերջին մասին մէջ ներկայացուած են Րաֆֆիի կենսն ու գործը:

Յայտնեք, թէ «Հայ Գիր» մատենաշարը առաջին թիւով հրատարակած է «Վերջ Հայաստանի» գիրքը: Ան նախապէս հրատարակած է ինչ գրքակներ, որոնց կարգին էին Ղազարոս Աղայեանի հեքիաթները, Դերենիկ Դեմիրճեանի «Պոլսի պոլսի մկնիկը» եւ Ս. Մահաբեկեանի «Հրապարակ» Միջոցը:

Հատորէն օրինակ մը տնայնու համար կարելի է դիմել հետեւեալ հասցէին:
Hye Keer
7625 White Oak Ave,
Reseda CA 91335
Հեռաձայն՝ (818) 342-6624

ԶԲՕՍԱՇՐՋԻԿՆԵՐՈՒ ԹԻՒԸ Կ'ԱՒԵԼՆԱՅ

Այս տարուան Յունուար ամսուան ընթացքին, նախորդ տարուան նոյն ժամանակաշրջանին համեմատութեամբ բարձրացած է Հայաստան այցելելու նպատակով օտարերկրացիներու կողմէ գրասաշրջական կազմակերպութիւններուն ներկայացուած դիմումներուն թիւը:

Ըստ գրասաշրջական գործակալութիւններու ներկայացուցիչներուն, դիմումներու նման աճի պահանջներու պարագային այս տարի գրասաշրջական գործակալութիւններու միջոցով Հայաստան այցելող գրասաշրջիկներուն թիւը կրնայ աւելնալ 15-20 առ հարիւրով:

Յայտնեք, որ հրապարակուած պաշտօնական տուեալներուն համաձայն, 2001 թուականին Հայաստան այցելած գրասաշրջիկներու թիւը հասած է 100 հազարի, սակայն անոնց միայն 25 առ հարիւրը օգտուած է գրասաշրջական գործակալութիւններու ծառայութիւններէն:

Միացեալ գրասաշրջիկները Հայաստան ժամանած են իրրեւ պետական եւ կառավարական պատուիրակութիւններու անդամներ՝ իրենց ծանօթներու ու բարեկամներու հրաւերով:

ԸԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱԴՈՒՆՔԻ ԴԱՍԸՆԹԱՅՔ

Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան մարտական պատրաստութեան վարչութեան Բարձրագոյն սպայական դասընթացներու եւ Ռազմական հիմնարկի 12 սպաներ մասնակցած են 22էն 27 Փետրուար Մաղկադորի մէջ կայացած Միջազգային մարտահարկական իրաւունքի դասընթացին, որ կազմակերպուած էր կարմիր խաչի միջազգային կոմիտէի կողմէ՝ նախարարութեան հետ գործակցութեամբ:

Այս դասընթացին նպատակն է պատրաստել հրահանգիչներ, որոնք հետագային պիտի իրականացնեն Միջազգային մարտահարկական իրաւունքի դասաւանդումը իրենց համապատասխան գիւնդերական հաստատութիւններուն կամ զօրամասերուն մէջ:

ՍԻՆԻՔԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ՝ ԻՐԱՆԻ ՄԷՋ

Սինիքի մարզպետ Էտիկ Բարսեղեան պատուիրակութեան մը ընկերակցութեամբ 24 Փետրուարին այցելեց Իրանի Արեւելեան Ատրպատական նահանգ: Պատուիրակութեան մաս կը կազմէին մարզի արտադրական կառույցներու ղեկավարներ եւ գործարարներ:

Այցելութեան նպատակն էր ծանօթանալ անցեալ տարուան Յունուարին այդ նահանգին հետ ստորագրուած փոխըմբռնման յուշագիրի գործադրութեան ընթացքին, ինչպէս նաեւ իրականացնել այս տարուան համար նոր յուշագիրի մը ստորագրութեան նպատակով նախապատրաստական աշխատանքներ:

ՅՈՒՐԵԼԵՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ

Գրիգոր Նարեկացիի «Մատեան ողբերգութեան» ստեղծագործութեան 1000ամեակը եւ երաժշտական Արամ Խաչատրեանի ծննդեան 100ամեակը յառաջիկայ տարի պատշաճօրէն նախապատրաստելու նպատակով Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի որոշումով ստեղծուած են համապատասխան յորելնական յանձնախումբեր:

Չորս յորելնական յանձնախումբերուն պիտի նախագահէ Հայաստանի մշակոյթի, երիտասարդութեան հարցերու եւ մարմնակրթութեան նախարար Թուրան Շառոյեան:

ԱԶԳԱՅԻՆ Գ. ՉԱԹԱԼՊԱՇԵԱՆ - ԹՈՐԳՈՍԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՐԳԻ ԵՐԵԿՈՅ
ՄԵԿԱՐԱՍԻՆԻՍՏԱՐ՝
ԱՐՄԷՆ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ
●Շաբաթ, 2 Մարտ 2002, երեկոյեան ժամը 8:00ին, Ս. Յակոբ եկեղեցւոյ «Տիրան Պապիկեան» սրահին մէջ: Կառատուը ապահովուած:
●Կիրակի, 3 Մարտ 2002, երեկոյեան ժամը 6:00ին «Յովհաննէս Պողոսեան» սրահին մէջ:
Սակ՝ 10.000 լ.ն.
Ծանօթ.- Տոմսերը ստանալ «Կանայ Չայն»էն, Համազգայինի գրախանութն, դպրոցի քարտուղարութենէն եւ ելոյթի օրերը կիշէն:
www.hamazkayin.com

ԼԱԹՎԻՈՅ ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ԴԵՍՊՈՒՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի մէջ

Լաթվիոյ նոր նշանակուած դեսպան Ալվարս Վոլտերս 22 Փետրուարին իր հաւատարմագիրը յանձնած է Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանին:

Նախագահ Քոչարեան այս առիթով ըսած է, թէ Հայաստանի եւ Լաթվիոյ կարեւոր խնդիրները գրեթէ նոյնն են, եւ այդ խնդիրներուն ընդհանրութիւնը աւելի կը մօտեցնէ երկու երկիրները:

Ա. Վոլտերս հաստատած է իր երկրին շահագրգռութիւնը՝ Հայաստանի հետ կապերը սերտացնելու: Կողմերը արձանագրած են, թէ հայ-լատվիական քաղաքական յարաբերութիւններուն մէջ հարցեր չկան, իսկ տնտեսական կապերը պէտք է աւելի զարգանան եւ ամրապնդուին:

Դեսպանը համաձայն կերպով ներկայացուցած է իր երկրին արտաքին քաղաքականութեան հիմնական ուղղութիւնները:

Նոյն օրը նշանակուած դեսպանը այցելած է Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանին եւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանին:

Անդրանիկ Մարգարեան յոյս յայտնած է, որ նոր նշանակուած դեսպանը իր գործունէութեան ընթացքին խթանէ Հայաստանի եւ Լատվիոյ միջեւ սկսած քաղաքական երկխօսութիւնը, որ իր կարգին պիտի աշխուժացնէ գործակցութիւնը տնտեսութեան եւ այլ մարզերու մէջ: Վարչապետը կարեւոր նկատած է յատկապէս դրամատորներին, արդիւնաբերութեան եւ գրասաշրջութեան մարզերու մէջ համագործակցութիւնը, որովհետեւ Լատվիայ այդ



մարզերուն մէջ մեծ ներուժ եւ փորձառութիւն ունի: Երկու կողմերը հաստատած են իրենց երկիրներուն պարտատակամութիւնը՝ փոխադարձ գործակցութիւնը ծաւալելու: Կարեւոր նկատուած են երկու երկիրներուն միջեւ իրաւական դաշտերու ձեւաւորման, միջազգային կազմակերպութիւններուն շրջանակներուն մէջ համագործակցութիւնը շահութակելու եւ զարգացնելու խնդիրները:

Նոյն օրը Լատվիոյ դեսպանը ընդունուած է Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Արմէն Նախատրեանին կողմէ: Վերջինս նշած է, թէ Հայաստանը հասած է երկու երկիրներու փոխարարներութիւնները զարգացնելու եւ ամրապնդելու: Նշուած են երկու երկիրներուն առեւտրատնտեսական, գիտական-կրթական եւ մշակութային համագործակցութեան կարելիութիւնները: Նոր նշանակուած դեսպանը նշած է, թէ Լատվիա-Հայաստան յարաբերութիւնները այսօրու հետեւ գարգացման իսկական հեռանկարներ ունեն: Անկախութենէն ետք երկու երկիրները զարգած են քաղաքական, ժողովրդավարական եւ բարեփոխումներով

եւ ունեցած են իրենց ռազմավարական նպատակները:

Հայաստանի Ազգային Ժողովին մէջ Ա. Վոլտերս հանդիպում ունեցած է նաեւ Հայաստան-Լատվիա բարեկամութեան պատգամաւորական խումբի ղեկավար Գալուստ Մահաբեանի հետ: Ան կարեւոր նկատած է երկիրներու կապերու սերտացումը, որ շահաւէտ կրնայ ըլլալ փորձառութիւններու փոխանակման եւ միջազգային կառույցներուն մէջ համագործակցութեան առումով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

ԱՐԺԱՆԹԻՆԱՐԱՅ ԳԱՂԹՕՃԱՄ

ԱԼԹԱ ԿՐԱՍԻԱՅԻ ԵՒ ՔՈՐԻԵՆԹԵՍԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

ՀԱՅԵՐԸ՝ ԱՐԺԱՆԹԻՆԻ ԱՌԱՋԻՆ ՎԵՐԱԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

Ժ. դարու վերջաւորութեան եւ յատկապէս Մեծ Եղեռնի յաջորդող տարիներուն կազմաւորուած Արժանթինի հայկական գաղթօճախները գլխաւորաբար կեդրոնացած են Պուէնոս Այրէսի, անոր մօտակա Օլիվոսի, Վիսէնթէ Լոփէսի, Ֆլորիսի, Ինչպէս նաեւ Քորտոպայի, Ռոսարիոյի, Ալթա Կրասիայի, Մար տէյ Փլաթայի, Թուբուամի, Բորրիէնթէսի եւ Մենտոսայի մէջ:

Սակայն հետաքրքրական է նշել, որ փոքրամասնութիւնը Արժանթինի հաստատման մասին յիշատակութիւն մը պահուած է շատ աւելի կանոնաւոր, սպանական գաղթատիրութեան օճախներէն: Ժ. դարին: Այս հիմամբ այլ հայերը մասամբ Արժանթինի առաջին վերաբնակիչներէն կարելի է նկատել:

ՀԱՅԵՐ՝ ԱՐԺԱՆԹԻՆԻ ԿԱԶՄԱՒՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԿԱՐՁԱՆԻՆ

Եւրոպական մեծ երկրաբանութիւններու ժամանակ, Ժ. դարուն սկիզբը, կարգ մը լատինացի ծովագնացներ հասան Հարաւային Ամերիկայի անծանօթ ափերը եւ Ռիօ տը լա Փլաթայի շուրջը: Անոնցմէ իտալացի Ամերիկո Վեզպուչի մօտաւորապէս 1502ին ճոն ցամաք ելաւ: Անոր յաջորդեցին ուրիշներ. իտալացի Տիտո Մորիսի՝ 1516ին, Ֆերտինանտ Մակելանոն՝ 1520ին եւ իտալացի Սեպասթիան Գապո՝ 1526ին: Քաջօ յայտնաբերեց Փարանայի եւ Փարակուէյի գետերը եւ Սանթի Սփիրիթուս բերդը կառուցեց: Ան Սպանիա լուր դրկեց, որ արծաթի հարուստ հանքեր կան իր յայտնաբերած շրջաններուն մէջ: Այս պատճառով ալ շրջանի կոչուեցաւ Արժանթին (արծաթի երկիր): Սպանիա 1535ին ճոն դրկեց Փետրո տը Մենտոսան, որ 1536ին հիմնեց Սանթա Մարիա տէյ Պուէն Այրէ (Պուէնոս Այրէս) բնակավայրը:

Խուան տը Ալոյաս եւ Տոմինիօ Մարթինէս տը Իրալա 1537ին հազարաւոր քիլոմետրներ հետախուզելով հասան Փարակուէյի գետին ափերը, ուր Իրալա կուարանի ցեղախումբին մօտ հիմնեց Ասուեսիոնը (ներկայ Փարակուէյի մայրաքաղաքը): Պուէնոս Այրէսի փոքրամասնութիւնը բնակիչներէն ոմանք շարունակեցան հնդկներուն կողմէ, ոմանք Սպանիա վերադարձան, իսկ մնացողները 1541ին գաղթեցին Ասուեսիոն, ուր կեդրոնացան Արժանթինի վերաբնակիչները: Պուէնոս Այրէս վերաբնակեցուցեալ, երբ 1580ին իտալացի կարպա եւ անոր հետ տասը սպանացիներ եւ 75 խառնածիններ Ասուեսիոնէն գացին ու ճոն հաստատուեցան: Միաժամանակ, սպանական միւս գաղթավայր-

ակնարկելով գրած է. «Կը ճանչնամ եւ տեսած եմ Համբրիկայի մէջ»:

Փետրու փոխարքայութեան ըստ ընկերակցութեամբ 1776ին կազմուեցաւ Ռիօ տը լա Փլաթայի փոխարքայութիւնը, որ կ'ընդգրկէր Արժանթինը, Փարակուէյը, Ուրուկուէյը եւ հարաւային Պոլիվիան:

Արժանթինցիք ժ. դարուն սկիզբը անկախութեան պայքարի ձեռնարկեցին, 1810ին Ռիօ տը լա Փլաթայի Միացեալ Նահանգներու անկախութիւնը հռչակեցին, իսկ 1826ին երկիրը վերակոչուեցաւ Արժանթինի Դաշնակցային հանրապետութիւն:

Հայերու դէպի Արժանթին գաղթը սկսաւ 1880ական տարիներուն, եւ մինչեւ Մեծ Եղեռնի տարիները հայեր բնակութիւն հաստատեցին Պուէնոս Այրէսի եւ Քորտոպայի մէջ. յետ եղեռնեան շրջանին կազմաւորուեցան այլ գաղթօճախներ:

ԱՐԺԱՆԹԻՆԱՐԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

Ալթա Կրասիա գիւղաքաղաք մըն է Քորտոպայէն քառասուն քիլոմետր հարաւարեւմուտք, Սիբերո տը Քորտոպայի (Քորտոպայի լեռնաշղթայ) կամ Սիբերոյի կարմիր - մեծ լեռնաշղթայ) բարձունքներուն, դայարագեղ բնութեան ծոցին. ամէնուրեք՝ թանձրախիտ անտառներ, խոտառատ մարգագետիններ, արօտավայրեր, ծաղկաստաններ, եւ աւելի հեռուները՝ լճակներ, զետակներ եւ բարձր գագաթներ: Լեռները հարուստ են ծանրաքարի (մետաղի տեսակ մը, որմէ ելեկտրական լամբերու մէջի թելերը կը շինեն), միջբայի (բարակ թերթերու բաժնուող ապակեման հանքային նիւթ մը) եւ մագնիսի խումբին պատկանող ու կանաչի գարնող թանկագին քարերու հանքերով: Կլիման սքանչելի է, չոր եւ առողջարար ամառը՝ զով, ձմեռը՝ ցուրտ եւ ձիւնառատ:

Ալթա Կրասիա սպանական գաղթատիրական ժամանակաշրջանին հաստատուած բնակավայր մըն է, որ պահած է իր անաւական դիմազիծ՝ սպանական միջնադարեան ոճով կառուցուած բնակարաններով ու կառուցաներով: Երբ Ժ. դարուն Քորտոպայ հիմնուեցաւ եւ Փետրուի փոխարքայութեան գլխաւոր քաղաքներէն դարձաւ, եւ Պոլիվիոյ ու Չիլիի հետ կապերը աշխուժացան, սպանացի վերաբնակիչները գացին ու հաստատուեցան շրջանի ամառ լեռներուն վրայ եւ հիմը դրին Ալթա Կրասիայի: Անոնք իւրացուցին խոպան հողերը, խրճիթներ կառուցեցին, անտառները հատեցին եւ այգիներու ու արտերու վերածեցին, Սպանիայէն ներածուած ցուլեր բերին եւ շրջանը անասնապահական ու երկրաբորձական հարուստ բնակավայրի վերածեցին: Ալթա Կրասիա իր շրջակայքի գաղթականներով տաւարարուածութեան, հացահատիկի եւ գինիի արտադրութեան կարեւոր շրջան է: Անիկա նաեւ Արժանթինի լաւագոյն ամառանոցներէն է, ուր կան առաջնակարգ պանդոկներ:

Մեծ Եղեռնէն եւ կիլիկիոյ պարպումէն (1921) ետք Արժանթին հասնող հայերէն ոմանք հասան Քորտոպայ, ուր 1911էն սկսեալ արդէն փոքրիկ գաղթօճախ մը կազմաւորուած էր: Նոր գաղթականներէն ոմանք դժուարութեան հանդիպելով եւ նոր պայմաններ գտնելու ակնկալութեամբ արուարձանային շրջաններու մէջ հաստատուեցան. իսկ հաճընցի, կիւրինցի եւ մարաչցի քանի մը ընտանիքներ, այլեւ ծանօթացած ըլլալով տեղական պայմաններուն, շրջանին, եւ Ալթա Կրասիայի մասին նպաստաւոր տեղեկութիւններ ստացած ու տպաւորուած ըլլալով, 1920ական տարիներուն գացին ու ճոն բնակութիւն հաստատեցին: Մինչեւ 1930ական տարիներու սկիզբը փոքրիկ գաղթութիւնը կազմուեցաւ ճոն: 1934ին արդէն Ալթա Կրասիայի մէջ հայերու ներկայութեան մասին յստակ յիշատակութիւններ կան:

Գաղթական հայ ընտանիքները, սկզբնական շրջանի դժուարութիւններէ ետք, յամուտ կախատանքով տուն-տեղ եւ տնտեսութիւն կազմեցին. ոմանք խառնութիւն բացին եւ առեւտուրով սկսան գրադիր:

Շրջանի գրօսաշրջակայ գարգացող պայմանները նկատի ունենալով՝ կարգ մը ընտանիքներ, որոնք այլեւս որոշ բարեկեցութեան հասած էին, սրճարաններ եւ ճաշարաններ բացին եւ քանի մը տարուան ընթացքին յաջողեցան բաւական հարստութիւն ձեռք բերել:

Ալթա Կրասիա հաստատուած ընտանիքներուն տնտեսական վերելքը նկատի ունենալով՝ Քորտոպայ, Պուէնոս Այրէս եւ այլ շրջաններ հաստատուած հայերէն ոմանք (որոնք անձուկ պայմաններու տակ կ'ապրէին եւ շատեր ալ անորո՞ք էին) գացին ու ճոն հաստատուեցան: Այսպէսով, հաճընցի, քեսապցի, կիւրինցի,

պոլսեցի եւ մարաչցի ընտանիքներէ բաղկացած գաղութին թիւը 1940ական տարիներուն հասաւ քառասուն ընտանիքի՝ մօտաւորապէս երկու հարիւր հոգիի:

Հայեր հետզհետէ սկսան գարգացնել եւ բարելաւել իրենց սրճարաններն ու ճաշարանները, գրօսաշրջութեան սպասարկման նպաստաւոր պայմաններ ստեղծեցին, ոմանք իջեւանատներ կառուցեցին, իսկ թորոսեան եւ էլլէզեան ընտանիքները՝ պանդոկներ: Այդ պանդոկները միաժամանակ հայերու հաւաքավայրի վերածուեցան, որովհետեւ ամբողջ եղանակին Քորտոպայէն եւ այլ քաղաքներէ Ալթա Կրասիա այցելող եւ օդափոխութեան ելլող հայեր ճոն կ'իջեւանէին:

Գաղութային կեանքը կազմակերպելու համար ալթա կրասիացիք եօթը հոգիէ բաղկացած վարչական մարմին մը կազմեցին. իր կարգին, ՀՕՄ ճոն մասնաճիւղ հիմնեց, իսկ արժանթինահայ «Արմենիա» մշակութային ընկերակցութիւնը (որ հայաշատ իւրաքանչիւր քաղաքի մէջ առանձին վարչութիւն եւ ակումբ ունի) ճոն «Բարգէն Սիւնի» խումբը կազմեց: «Բարգէն Սիւնի» բացաւ իր առանձին համանուն ակումբը, որ երիտասարդական հանդիպումներու կեդրոնի վերածուեցաւ, եւ ուր գրոյցներ եւ դասախոսակա՞նք ձեռնարկներ յաճախակի դարձան:

Այդ հեռավոր եւ օտար ափերուն վրայ նոր սերունդին հայցի դաստիարակութիւնը ջանքերու համար ալթա կրասիացիք սենեակի մը մէջ դպրոց բացին, ուր հաւաքուեցան խումբ մը մանուկներ. դպրոցը սկսաւ կառուցուելի սեղանակալ ուժերով:

Ալթա Կրասիայի համայնքը 1950ական տարիներուն որոշեց սեփական դպրոց կառուցել եւ այդ նպատակով ալ աշխատանքի ու հանգանակութիւններու ձեռնարկեց: Ալթա Կրասիայէն հանգանակուեցաւ երկու հարիւր հազար փեսօ, իսկ Քորտոպայէն եւ Պուէնոս Այրէսէն՝ մօտաւորապէս երեք հարիւր հազար փեսօ:

1960ին գաղութը գնեց դպրոցի սեփական շէնք մը 420 հազար փեսօ արժէքով, իսկ նորոգութիւններու համար ծախսուեցաւ մօտաւորապէս ութսուն հազար փեսօ: Գարոցը օժտուեցաւ նաեւ զրադարանով, հայերէն ընտիր գիրքերով, զորս նուիրեց Պուէնոս Այրէս բնակող Մատինեան ընտանիքը, որուն անունով ալ կոչուեցաւ զրադարանը: 1960 - 1961 կրթական տարիշրջանին դպրոցը բացաւ իր դուռերը՝ քսանհինգ աշակերտներով:

Գաղութային կեանքը այդ տարիներուն զգալի վերելք ունեցաւ, այլ ընտանիքներ եւս գացին հաստատուեցան ճոն, եւ հայութեան թիւը հասաւ մօտաւորապէս երեք հարիւրի:

Բայց 1970ական տարիներուն սկսաւ գաղութին տկարացումը, հայկական ընդհանրութեան հետեւ եւ առանձնացած, շատ մը ընտանիքներ հեռացան եւ Քորտոպայ ու Պուէնոս Այրէս հաստատուեցան: Այնուհետեւ դպրոցն ալ փակուեցաւ: Ներկայիս փոքրթիւ հայեր մնացած են Ալթա Կրասիայի մէջ:

ՔՈՐԻԵՆԹԵՍԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ



Յիւսեաններու կողմէ 1687ին կառուցուած Քորտոպայի մայր տաճարը:

Քորրիէնթէս քաղաք մըն է Արժանթինի հիւսիս - արեւելքը, Պուէնոս Այրէսէն 1074 քիլոմետր հիւսիս, Փարակուէյի սահմանին մօտ, Ռիօ Փարանա գետի արեւելեան ափին, իսկ անոր դիմացը կը գտնուի Ռեսիսթենսիան:

Քորրիէնթէս պահած է իր հին, գաղութային շրջանի ճարտարապետական կառուցը: Լա Քրուս եկեղեցին ուղիղաանկյան կեդրոն մըն է, ուր Ժ. դարու փոխարքայ Խուան Թորրէս տը Վերայի պատկանող խաչը գետեղած է. իբրեւ ազգային արժէք՝ անիկա պահպանութեան տակ առնուած է: Հիւսիս - Արե-



Ալթա Կրասիայի տաճարը:

ւելքի համայնարանը հիմնուած է 1957ին: Քաղաքը ներկայիս 180 հազար բնակիչ ունի: Քորրիէնթէսի շրջանը արժանթինեան Միջագետքի մէջ մասսայիկ կ'ապրէ. անծայրածիր դաշտեր, նեղուցներ, ջրանցքներ, գետեր, լիճներ եւ ճախճախուտներ: Չարագացած են բամբակի, բրինձի, կիտրոնային պտուղներու արտադրութիւնը, տաւարաբուծութիւնը, ձկնորսութիւնը ու որսալողութիւնը: Քորրիէնթէս գետային մեծ նաւահանգիստ է Պուէնոս Այրէսի եւ Փարակուէյի միջեւ:

Ռիօ տը լա Փլաթայի փոխարքայ Խուան Թորրէս տը Վերա ի Արակոն 1588ին ճոն կառուցեց Սան Խուան տը Վերա տը լա Սիեթի Քորրիէնթէս (որ կը նշանակէ եօթը հասարակած) ամրոցը, եօթը արագահաս գետակներու անուկով: Անոր շուրջը բնակավայր մը կազմաւորուեցաւ, իսկ յիսուսեաններ ճոն «Ռեստուանտիս» (աշխատանքի միսիոնարութիւններ) հաստատեցին: 1865ին Փարակուէյի բանակը ներխուժեց ճոն, բայց պարտուեցաւ եւ ցիր ու ցան եղաւ:

Յետ եղեռնեան շրջանին Արժանթին հասնող գաղթականներէն քանի մը հոգի, գլխաւորաբար՝ չինիլիւցիցիներ, տեղեկանալով, որ Քորրիէնթէս մաքուր եւ վաճառաշահ քաղաք է, գացին եւ ճոն բնակութիւն հաստատեցին. քանի մը հոգի ալ՝ մշեցի իրաւաբէտներ, հանրային Գեորգ Շիբրտովեան եւ այլք Փարակուէյի սահմանը անցան եւ Ասուեսիոնի մէջ հաստատուեցան: Այսպէսով, մինչեւ 1940ական տարիները քսանութ հայերէ բաղկացած փոքրիկ համայնք մը կազմաւորուեցաւ Քորրիէնթէսի մէջ:

Գաղթականները առաջին տարիներուն մանրապաճառութեան եւ փերեզակութեան ձեռնարկեցին, մէկ - երկու հոգի՝ լուսանը կարչութեան (որոնք լուսանկարչական մեքենայով պտուղներով կը նկարէին): Յետոյ քանի մը հոգի արհեստներու ձեռնարկեցին: Տարիներու ընթացքին իրենց տնտեսութիւնը բարելաւելէ ետք շատեր ընդարձակեցին իրենց գործը: ԱՖէրեան եղբայրները մանածոյի գործարան հիմնեցին, որ տնօրէն Երուանդ ԱՖէրեանի խոհմ վարչութեան ներքեւ զգալի յառաջդիմութեան հասաւ: Չինիլիւցիցի Սահակ Քէհեայեան լուսանկարչատուն բացաւ, իսկ անոր համագլխացի Գիսակ Էօմէզեան, որ դեղագործութիւն ուսած էր, դեղարան բացաւ: Երկու ընտանիքներ կ'ըստի դաշարաններ բացին:

Հայ կեանքէն հետեւ եւ առանձնացած՝ Քորրիէնթէսի հայերը զրկուած էին հոգեւոր հոգատարութեան, մինչեւ որ 1950ական տարիներուն Նորայր բանակայ Տէր Խորէնեան, այցելելով ճոն, եկեղեցական խորհուրդներ եւ կորտուլիներ կատարեց:

Քորրիէնթէսի հայութեան թիւը որոշ ժամանակ հասաւ մինչեւ վաթսուս հոգիի, բայց յետոյ շատեր գաղթեցին Պուէնոս Այրէս, որմէ ետք գաղթօճախը անշքացաւ:



Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Կ



Ֆուտբոլի յանձնախումբը կը պատասխանէ հարցումներուն: ՉախէԳ աջ. Բաֆֆի Թիթելեան, Նարեկ Աբրահամեան, Խաչիկ Զեօւեան, Ժամու Գասպարեան եւ Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնի անդամ ժերար Ֆուպիպեան:

Լիբանանի ֆուտբոլի 2001 - 2002 եղանակի ախոյեանութեան դարձի մրցումներուն նախօրեակին, երէկ երեկոյեան Հ. Յ. Դ. Սարգսապատ ակումբին մէջ տեղի ունեցաւ գորոյց - հանրայրում մը՝ Հ.Մ.Լ.Մ-ի ֆուտբոլի համակիրներուն եւ ֆուտբոլի յանձնախումբին միջեւ:

Իր բացման խօսքին մէջ, ֆուտբոլի յանձնախումբը



Ներկայ համակիրներէն մաս մը (Լուսակարճերը՝ Պ. ԶԱՐՈՒԿԵԱՆԻ)

բը չուզէր երթի մրցումներուն անդրադառնալ, այլ շեշտը դրաւ անցեալը մոռնալու եւ ապագային նայելու անհրաժեշտութեան վրայ, ի խնդիր ֆուտբոլի վերելքին, որ ներկայիս կարեւորագոյն հրամայականն է:

Շեշտը դրուեցաւ խումբին նեցուկ կանգնելու անհրաժեշտութեան վրայ, նշելով, որ այժմ խումբը կը դիմագրաւէ դժուար պայմաններ:

Հ.Մ.Լ.Մ-ի համակիրները կը գտնուին պարտաւորութեան մը դիմաց. անոնք ինչպէս որ տէր կը կանգնին խումբին փայլուն օրերուն, պարտաւոր են շատ աւելին ընել նեղ օրերուն:

Կարեւորութեամբ շեշտուեցաւ դաշտէն ներս թէ դուրս լուսանքը մոռնալ, որ փոխաբար իր վատ անդրադարձը կ'ունենայ մարզիկներուն ու բոլորին վրայ:

Այս համակիրներուն առիթ տրուեցաւ իրենց հարցումները ուղղելու ֆուտբոլի յանձնախումբին, որ ամենայն անկեղծութեամբ պատասխանեց խումբով մտահոգ համակիրներուն, թելադրելով անոնց՝ սպասել արձանագրութիւնը արդիւնքներուն, որմէ ետք միայն ընել մեկնարարները:

Համակիրներուն մօտ ի յատկեալ կարեւոր մտահոգութիւն մը, թէ արդեօք ի՞նչ պատճառներով բանակումի համար Թրիֆոլի մեկնեցան միայն 24 մարզիկներ, մինչ 65ն 7 մարզիկներ նկատի չառնուեցան: Գանձնախումբը պատասխանեց, որ խումբին քերքի պատասխանատուութիւնը վստահուած է միայն մարզիկին՝ ուսումնասիրելիքը պատասխանելու համար անոր հաշիւներով կարգ մը մարզիկներ չմեկնեցան Թրիֆոլի: Սակայն, այս մէկը չի նշանակեր, թէ անոնք դուրս կը մնան ֆուտբոլի ներկայացուցչական կազմէն եւ վստահաբար ապագային պիտի ունենան իրենց դերը խումբին մէջ:

Շեշտը դրուեցաւ հոգ տանելու Հ.Մ.Լ.Մ-ի կրտսերներուն եւ բոլոր դասակարգներու խումբերուն, ապագային մարզիկներ ունենալու նպատակով:

Լաւ եւ բնտրի հայ մարզիկներ ունենալու համար շեշտուեցաւ կազմակերպել միջմասնակցային մրցաշարքեր, որոնք անկապակե կու տան իրենց պտուղը: Ֆուտբոլի յանձնախումբը խոստացաւ ապագային կազմակերպել նմանօրինակ այլ հանդիպում - գորոյցներ, համակիրները միշտ տեղեակ պահելով սարուած աշխատանքներուն ուղղութեամբ:

«ԶԷՍՓԻՆԶ ԼԻԿ»-Ի ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

«Զեմփինզ Լիկ»-ի հանգրուանի դարձի մրցումներուն, երէկ տեղի ունեցան չորս ճակատումներ, որոնց քննարկումը մեծագոյն յաղթականը եղաւ Մանչեսթըր Յունայթըդը, որ 5-1 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Նաւորթ, աւելի քան 66 հազար համակիրներու ներկայութեան: Տէլիֆու Պեթհամ (18րդ), Օլդ Կիւնար Մոլլարթ (31րդ եւ 78րդ), Միքայէլ Միլվեյթ (38րդ) եւ Ռուս Վան Նիքսթըր (64րդ) փեւսալիքով նշանակեցին Մանչեսթըրի կողմը, իսկ Տրենտերիք Տա Ռոշը՝ Նաւորթի կողմը (17րդ):

Ա. Է. Ռոմա 3-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց իր հիւրը՝ Պարսելոնան, շնորհիւ՝ Էմերսոնի (60րդ), Վինչենցո Մոնթիպալի (73րդ) եւ Տամիաս Թոմասի (90րդ) նշանակած կողմերուն:

Ռոքք Սանթրոս Բրոնքի կողմէ նշանակուած կողմ (81րդ) բաւարար եղաւ, որ անոր կազմը (81րդ) բաւարար եղաւ, որ անոր կազմը՝ Պայերն Մոնչէխի 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Պարսիպսն:

Երկուտան չորրորդ եւ վերջին մրցումը՝ Կայրասաարայի եւ Լիվըրպոլի միջեւ վերջ գտաւ 1-1 արդիւնքով, Ռաֆի Նիքոլեանը նշանակեց յաղթական կազմին կողմ (70րդ), իսկ Էմիլ Հեքքը՝ Լիվըրպոլի հաւասարութեան կողմ (78րդ):

ԿԻՐԱԿԻ ՕՐ ԿԸ ՍԿՍԻ ՖՈՐՄԱՏԻԼԱ Ի 2002Ի ԱՇԽԱՐԿԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ



Պարիքելլո (ձախից) եւ Շուվախըր

Յառաջիկայ Կիրակի, 3 Մարտին, Մեյպուոնի մէջ (Աւստրալիա) կը սկսի Ֆորմուլա Ի 2002ի աշխարհի ախոյեանութիւնը, որուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն 11 խումբեր: Առաջին կրան փրին, որ տեղի պիտի ունենայ Աւստրալիոյ մէջ, պիտի սկսի Շաբաթէն Կիրակի լուսնոյ գիշերը, Պելլուրթի մամանակացոյցով՝ ժամը 5:00ին: Նախորդող օրը տեղի պիտի ունենայ փոյ - փոյլի մրցումը, որ պիտի ըլլայ շատ կարեւոր, կրան փրին սկսող վարորդներուն համար, որոնք պիտի փորձեն գտնուիլ առաջնակարգ դիրքերու վրայ: Անկախ տեղի պիտի ունենայ Ռուրաթէն Շաբաթ լուսնոյ գիշերը՝ ժամը 4:00էն 5:00: 58 շրջան (շփ) ընդգրկող Աւստրալիոյ կրան փրին երկարութիւնն է՝ 307,574 քմ.:

Փոյ - Փոյլի մրցումներուն, ցարդ լաւագոյն արդիւնքը արձանագրած է «Ֆեռարի» գերմանացի վարորդ Միքայէլ Շուվախըրը (մէկ վայրկեան 26՝ 892, անցելով տարի): Շուվախըր արձանագրած է նաեւ ամենէն արագ լիտր (մէկ վայրկեան 28՝ 214, 2001ին):

Կիրակի օրուան կրան փրին նախօրեակին, յետագարձակնարկ մը նետելով վարորդներուն եւ խումբերուն վրայ, կարելի է ըսել, որ «Ֆեռարի» ցարդ արձանագրած է ամենէն լաւ արդիւնքը, շախէլով 144 կրան փրին: «Մաքլարըն» շահած է 134, իսկ «Ուիլիամս» 107: Բացի այս մեկէն, Շուվախըր շահած է առաւելագոյն կրան փրինները՝ 53 անգամ:

Իր ասպարէզին ընթացքին, Շուվախըր 43 անգամ փոյ - փոյլի մրցումներուն առաջին հանդիսացած է, այժմու վարորդներուն մէջ: Սակայն, հակառակ սասոր, մրցանիշը կը պատկանի պրապիլի Ալլրոն Սեննայի (65 անգամ):

Անցեալ տարի Շուվախըր 11 անգամ գրաւեց փոյ - փոյլի մրցումներուն դիրքը: Այժմ «Ֆեռարի», 147 անգամ գրաւած է փոյ - փոյլի մրցումներուն դիրքը, մինչ «Մաքլարըն» եւ «Ուիլիամս» 112 անգամ անգամ:

Բացի այս բոլորէն, Շուվախըր իր ասպարէզին ընթացքին այլ իրագործումներ եւս կատարած է: Ան յաջողած է շահիլ 801 կետ: Անցեալ տարի ան շահեցաւ 123 կետ, ինչ որ կը նկատուի մրցանիշ մէկ եղանակի ընթացքին:

2002ի ախոյեանութեան իրենց մասնակցութիւնը բերող 11 խումբերէն վեցը ցարդ չեն կրցած որեւէ կրան փրին մը շահիլ: Անոնք են՝ «ՊԱՐ», «Արոյ», «Սաուլարը», «Ժակուար», «Միներտի» եւ «Թոյոթա»: Այս վերջինը արձանագրած ըլլալով իր մասնակցութիւնը կը բերէ Ֆորմուլա Ի աշխարհի ախոյեանութեան:

Նոր շարժակը՝ «Քուալիթի» (ժակուար), պիտի ըլլայ «Արաթի» փոխարինողը: Նորեկ վարորդը պիտի ըլլայ գերմանացի Հայնց-Հերրլոտ Ֆրենցըն, իր կողքին ունենալով պրապիլի Էնրիքե Պենտլինգը:

Մարք Ուեպլեր պիտի ըլլայ առաջին անգամ սեփականութիւն ունեցող Ֆորմուլա Ի ինքնաշարժը, 30 տարուան մէջ առաջին անգամ ըլլալով: Երկրորդ վարորդն է մալիզիացի Ալեքս Ենիք:

ՊԱՍՔԵԹՊՈՒ ԱՅՍՕՐ՝

Հ. Մ. Լ. Մ. - ՌԻԱՏԻ ՂԱԶԻՐ

Լիբանանի պասքեթպոլի տղոց Բ. դասակարգի ախոյեանութեան աւարտական հանգրուանի երկրորդ ճակատումին, այսօր՝ Չորեքշաբթի, Հ. Մ. Լ. Մ-ի ներկայացուցչական կազմը, Հ. Մ. Լ. Մ-ի «Թնտուկեան» մարզադաշտին վրայ կը հիւրընկալէ Ռիատի Ղազիրը: Մրցումը տեղի կ'ունենայ ժամը 21:00ին: Հ. Մ. Լ. Մ-ի համակիրներէն կը սպասուի խուռնեւրամ ուղղուելի դաշտ, քաջախեղութեամբ Հ. Մ. Լ. Մ-ի տղաքը:

● **ԼԻԲԱՆԱՆԻ** պասքեթպոլի աղջկանց Ա. դասակարգի ախոյեանութեան Յրդ դիրքի երկրորդ ճակատումը երէկ վերջ գտաւ Սատաթայի յաղթանակով, որ 57-50 արդիւնքով պարտութեան մատնեց Հ. Մ. Լ. Մ-ի ներկայացուցչական կազմը:

Երրորդ եւ ճակատագրական մրցումը տեղի կ'ունենայ յառաջիկայ Կիրակի, 3 Մարտին, Սատաթայի դաշտին վրայ, ժամը 20:00ին:

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՀՒԻՐԸՆԿԱԼ ԿԱԶՄԵՐԸ ՊԱՐՏՈՒԵՑԱՆ

ԷՅ. ՊԻ. ԷՅ-ի երէկուան չորս մրցումներն այլ վերջ դտան հիւրընկալ կազմերուն պարտութեամբ. անոնք չկրցան օգտուել իրենց դաշտին վրայ մրցելու առաւելութենէն:

Ֆիլատելիքիա Սիքսերգ կրեց եղանակի իր 28րդ պարտութիւնը, իր հիւրէն՝ Փորթլենտ Թրէյլ Պլէյթերզն, 88-83 արդիւնքով: Մինչ Պլէյթերգ կ'արձանագրէր իր վեցերորդ յաջողակական յաղթանակը, անդին՝ Սիքսերգ կը կէր իր չորրորդ պարտութիւնը, իր կատարած վերջին վեց մրցումներուն ընթացքին: Յաղթական կազմին մարզիկներէն Ռաշոու Ուալաս նշանակեց 29 կէտ եւ 10 ռիպաուսու, իսկ անոր խմբակից Աթթի Բիփըն՝ 17 կէտ: Սիքսերգի մարզիկներէն Էրիք Մեո նշանակեց 18 կէտ եւ 10 Էսիսք, իսկ անոր խմբակից Էլրն Ալլըքսըն՝ 18 կէտ եւ 7 Էսիսք:

Մեմֆիսի մէջ, Լուս Անճելու Բիլիթերգ 90-77 արդիւնքով պարտութեան մատնեց դաշտին տէրերը՝ Կրիզիթը: Բիլիթերգ արձանագրած յաղթանակին մէջ իր կարեւոր բաժինը ունեցաւ Էլթըն Պրէնտ, որ իր նշանակած 27 կէտերէն յօացի, յաղթեցաւ իր սպայ Քրիսթի ընթացքին ամէնէն աւելի շատ ռիպաուսու կատարել (23): Անոր խմբակից Էլթ Մաքինիս նշանակեց 19 կէտ եւ 12 Էսիսք:

Օքլեյտի մէջ (Քալիֆորնիա), Ինտիանա Փէյլըրգ յետ երկարաձգման յաղթեցաւ պարտութեան մատնել դաշտին տէրերը՝ Կոլտըն Սթրէյթ Ուորիւրը, 102-97 արդիւնքով: Փէյլըրգի մարզիկ Ռեեի Միլըր նշանակեց 23 կէտ, իսկ անոր խմբակից Պրէտ Միլըր՝ 16 կէտ եւ 15 ռիպաուսու:

Վերջապէս, երէկուան չորրորդ եւ վերջին մրցումին, Մինեսոթա Վուլվզ 97-92 արդիւնքով պարտութեան մատնեց Շարլոթ Հոնթսթըրը, որ այսպիսով կրեց յաջողակական իր երրորդ պարտութիւնը:

● **ՍՏՈՐԵՒ՝** այսօրուան մրցումներուն յայտագրերը:

ԸՆԴՈՒԹ. 3 ՄԱՐՏ	ԺԱՄ
Ս. Խանամիրեան - Դպրեվանք (փոքր)	2:30
Լ. եւ Ս. Յակոբեան - Յառք (փոքր)	3:00
Ս. Քառասնից Մանկանց - Ճեմարան (փոքր)	3:30
Թնտուկեան - Դպրեվանք (մեծ)	4:00
Թնտուկեան - Գ. Չաբալպաշեան (փոքր)	4:45
Թորոսեան - Տամլեան - Թաթիկեան (փոքր)	5:10
Լ. եւ Ս. Յակոբեան - Տամլեան - Թաթիկեան (մեծ)	5:40

ԿԻՐԱԿԻ 4 ՄԱՐՏ	ԺԱՄ
Ս. Խանամիրեան - Թորոսեան (փոքր)	2:30
Ս. Հոփսիմեանց - Յովակիմեան (մեծ)	3:00
Ս. Հոփսիմեանց - Ջայ Աւետ. Թաթիկեան (փոքր)	3:40
Ս. Խանամիրեան - Սրբուհի Ազնեւ (մեծ)	4:10
Մեսրոպեան - Սրբուհի Ազնեւ (փոքր)	4:50
Մեսրոպեան - Թորոսեան (մեծ)	5:20

ԸՆԴՈՒԹ. 9 ՄԱՐՏ	ԺԱՄ
Ճեմարան - Լ. եւ Ս. Յակոբեան (փոքր)	2:30
Թորոսեան - Ջայ Աւետ. (Քաղաք) (մեծ)	3:00
Ս. Խանամիրեան - Տամլեան - Թաթիկեան (փոքր)	3:40
Ս. Քառասնից Մանկանց - Լ. եւ Ս. Յակոբեան (փոքր)	4:10
Արգաթեան - Գ. Չաբալպաշեան (փոքր)	4:40

